ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդարության և սոցիալական անհավասարության ընկալումը վերաբաշխիչ քաղաքականության իրականացման համատեքստում

ՆԱՐԻՆԵ ԱՍՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Ժամանակակից հասարակական-քաղաքական գործընթացներն ու սոցիալ-տնտեսական զարգացումները ձևավորում են տարբեր պատկերացումներ արդարության և սոցիալ-տնտեսական անհավասարության մասին: Այդ երևույթներն առանցքային դերակատարում ունեն իշխանության վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ ցուցաբերվող հասարակական աջակցության կամ, հակառակը, ընդդիմադիր տրամադրությունների ձևավորման տեսանկյունից: Մյուս կողմից, եկամուտների վերաբաշխման մասին գոյություն ունեցող հասարակական պատկերացումները պայմանավորված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով՝ հավասարության նկատմամբ հասարակական պահանջ, ընկալվող և փաստացի սոցիալական (ան)հավասարություն, արդարության մասին ավանդական պատկերացումներ, հասարակության սոցիո-մշակութային առանձնահատկությունները, քաղաքական-ինստիտուցիոնալ միջավայրը և այլն: Հոդվածում ներկայացվում են այդ գործոնները, ինչպես նաև քննարկվում է դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ հասարակական ընկալման ձևավորման վրա:

Բանալի բառեր

Արդարություն, սոցիալական (ան)հավասարություն, վերաբաշխիչ քաղաքականություն, հասարակական ընկալում, սոցիալական մոբիլություն:

Նախաբան

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հասարակության եկամուտների վերաբաշխման գործընթացի հետ կապված

հիմնախնդիրներից թերևս ամենաառանցքայինը՝ սոցիալական արդարության և անհավասարության հասարակական ընկալումը, արժանացել է գիտական հանրության ուշադրությանը:[1] Այս հանգամանքը քննարկման և վիճարկումների առարկա դարձրեց հետևյալ հարցադրումը. ինչու՞ տարբեր հասարակություններ տարբեր կերպ են վերաբերվում անհավասարության երևույթին և, որպես հետևանք, տարբեր կերպ գնահատում պետության վերաբաշխիչ քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Օրինակ, Ֆ. Ֆարինան և Գ.Գրիմալդան նման տարամիտվող հասարակական ընկալումների պատճառները բացատրում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով: Նրանք, մասնավորապես, ներառում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են հավասարության նկատմամբ հասարակական պահանջը, սոցիալ-տնտեսական փաստացի անհավասարությունը, սոցիալական մոբիլության հեռանկարները, արդարության մասին ավանդական պատկերացումները, հասարակության սոցիալ-մշակութային առանձահատկությունները, քաղաքական-ինստիտուցիոնալ միջավայրը և այլն:[2] Հատկանշական է, որ այդ գործոններն ավելի շուտ լրացնում են միմյանց, քան բացառում: Ստորև մանրամասն կքննարկվի դրանցից յուրաքանչյուրը.

Վերաբաշխիչ քաղաքականության հասարակական ընկալման վրա ազդող գործոնները

Հավասարություն: Հատկանշական է, որ հասարակական-քաղաքական զարգացման ներկայիս պայմաններում հաստատուն է մնացել միայն սոցիալական հավասարության նկատմամբ հասա-

[1] **Farina F., Grimalda G.,** A Cross-country Experimental Comparison of Preferences for Redistribution. Department of Economic Policy, Finance and Development (DEPFID), University of Siena Working Paper, 2011, no. 2, pp. 1-2. **Piketty Th.,** Capital in the Twenty-First Century, Part 3 “Part Three: The Structure of Inequality”, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, Massachusetts London, England, 2014

[2] Նույն տեղում, էջ 3

րական պահանջը, մինչդեռ այդ հասկացության մեկնաբանությունը ժամանակի ընթացքում փոփոխությունների է ենթարկվել: Հետևաբար հարց է առաջանում, թե ի՞նչ պետք է հասկանալ «սոցիալական հավասարություն» հասկացության . սոցիալական հավասարության ներքո կարելի է հասկանալ այնպիսի ինստիտուցիոնալ գործընթաց, որը ճնշում է սոցիալական հակասությունների աճը և հասարակության կենսամակարդակի նվազումը. ավելին, այն խոչընդոտում է սոցիալական տարբերությունների վերածումը հասարակության բևեռացվածության և անկայունության գործոնի:

Անհավասարություն: Ինչպես արդեն նշվեց, վերջերս մեծացել է գիտական հանրության ուշադրությունը անհավասարության և եկամուտների վերաբաշխման վերաբերյալ հասարակական վերաբերմունքով պայմանավորված դրսևորումների նկատմամբ: Ավելին, առկա է կարծիք, որ հենց ընկալվող, այլ ոչ թե փաստացի անհավասարությունն է կանխորոշում անհատի հասարակական (նաև՝ էլեկտորալ) վարքագիծը, այդ իսկ պատճառով շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես է ձևավորվում անհավասարության վերաբերյալ հանրության վերաբերմունքը:[3]

Առհասարակ, սոցիալ-տնտեսական անհավասարությունը ցանկացած հասարակությանը բնորոշ հատկանիշներից է և ուշագրավ է, որ Արևմուտքում դրա հետ կապված հարցադրումները սրվել են բարձրացնում արդյունաբերական դարաշրջանի ինստիտուցիոնալ համակարգի ճգնաժամով ուղեկցվող նոր տեխնոլոգիական անցման ժամանակ: Այլ հարց է, թե ինչպես է այդ նույն հասարակությունն ընկալում անհավասարության առկայությունը, արդյո՞ք այն չափազանց է, բավարար կամ արդարացված: Անհավասարության ընկալումը անհատների սուբյեկտիվ գնահատականն է առ այն, թե ինչպիսին է այս կամ այն երկրում բնակչության եկամուտների տարբերությունը: Այսպես, օրինակ, եթե վերջինս, սուբյեկտիվ գնահատականների համաձայն, չափազանց

[3] **Acemoglu D., Robinson J.,** The Rise and Decline of General Laws of Capitalism. *Journal of Economic Perspectives*, 2015, **29**, 1., 3-28

մեծ է, ապա անհավասարությունը կարող է հիվանդագին ընդունվել, և ընտրազանգվածը, ամենայն հավանականությամբ, աջակցություն կցուցաբերի (կամ կպահանջի) պետության կողմից վերաբաշխիչ քաղաքականության իրականացմանը:

Այս դեպքում, հասարակական կարծիքի համաձայն, անհավասարությունն ավելցուկային է և ոչ արդարացված, ինչի հետևանքով առաջ են գալիս այնպիսի ապակայունացնող երևույթներ, ինչպիսիք են իշխանության վրա իրականացվող ճնշումները, հասարակության սոցիալ-քաղաքական միասնականության խախտումը և այլն:

Հասարակության ներսում ձևավորված անհավասարության պատճառների մեկնաբանման գործում ձևավորվել է մի միտում, որը կապված է Թոմաս Պիկետիի «Կապիտալը 21-րդ դարում» աշխատության հետ. այստեղ անհավասարությունը դիտվում է որպես կապիտալիզմի բնական պրոդուկտ, որը հնարավոր կլինի հաղթահարել միայն հարկերի և տրանսֆերտների սահմանման միջոցով: [4]

Բազմաթիվ գիտական քննարկումներ և քաղաքական բանավեճեր, նվիրված անհրաժեշտ և ավելցուկային, արդարացված կամ ոչ արդարացված անհավասարությանը, հղում են անում անհավասարության օբյեկտիվ ցուցանիշներին և հիմնականում կենտրոնացած են եկամուտների վերաբաշխման քաղաքականության վրա, որտեղ որպես հիմնական դերակատար է հանդես գալիս պետությունը:[5] Իր հերթին, պետության վերաբաշխիչ քաղաքականությունն ունի հասարակական աջակցության կարիքը և նախատեսում է, մի կողմից, հասարակության ներսում եկամուտների վերաբաշխման պահանջ, իսկ մյուս կողմից, նրա պատրաստակամությունը՝ մասնակցելու այս գործընթացին՝ հարկերի վճարման միջոցով: Ընդ որում, «եկամուտների վերաբաշխման պահանջ» ասելով հասկանում ենք մարդկանց

[4] **Piketty Th.,** Capital in the Twenty-First Century, Part 3 “Part Three: The Structure of Inequality”, The Belknap Press of Harvard University Press, Cambridge, Massachusetts London, England, 2014.

[5] **Alesina A., La Ferrara E.,** Preferences for Redistribution in the Land of Opportunities. *Journal of Public Economics*, 2005, 87, **Alesina A., Angeletos G.M.,** Fairness and Redistribution. American Economic Review, 2005, no. 4.

համաձայնությունն այն մտքին, որ պետությունը հասարակության սոցիալական բևեռացվածության մակարդակը մեղմելու համար պետք է իրականացնի եկամուտների վերաբաշխում: Վերջինս պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են պետության և նրա ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահությունը, պետական կառավարման արդյունավետությունը, սոցիալական պատասխանավության, գործառնման թափանցիկության և հաշվետվողականության առկայությունը և այլն:

Եկամուտների վերաբաշխման նկատմամբ պահանջի մասին խոսելիս անհրաժեշտ է դիտարկել, այսպես կոչված, «միջին ընտրողի» թեորեմը:[6] Միջին ընտրողը հակված է աջակցելու հարուստներից դեպի աղքատները ռեսուրսների վերաբաշխումն այն դեպքում, երբ իր անձնական եկամուտը միջինից ցածր է, իսկ հասարակության ներսում միջին և մեդիանային եկամտի միջև եղած ճեղքվածքը՝ մեծ:[7] Դա միջինից ցածր եկամուտ ունեցող անհատի ռացիոնալ ցանկությունն է, քանի որ եկամուտների վերաբաշխման դեպքում նա կարող է դառնալ ավելի բարձր եկամուտ ունեցողների պրոգրեսիվ հարկման միջոցով ավելի ցածր

[6]Միջին ընտրողի թեորեմի («Median voter theorem») համաձայն, «քվեարկության համակարգը՝ մեծամասնական սկզբունքի համաձայն, կընտրի այն արդյունքը, որը առավել նախընտրելի է միջին ընտրողի համար»: Սա կապված է հանրային ընտրության տեսության և վիճակագրական քաղաքական գիտության հետ: Միջին ընտրողի թեորեմը հիմնված է երկու հիմնական ենթադրությունների վրա. առաջին՝ ընտրողները իրենց առաջարկված քաղաքական այլընտրանքները կարող են տեղավորել միաչափ քաղաքական սպեկտրում: Երկրորդ՝ թեորեմը ենթադրում է, որ ընտրողների նախընտրությունները միակողմանի են, ինչը նշանակում է, որ վերջիններս ունեն մեկ գերակա այլընտրանք: Սա նաև նշանակում է, որ ընտրողները միշտ ունեն խթան՝ քվեարկելու սեփական իրական գերակայությունների օգտին: Վերջապես, միջին ընտրողի թեորեմն առավել լավ կիրառելի է մեծամասնական ընտրական համակարգի պայմաններում:

[7] **Meltzer A., Richard S.,** A Rational Theory of the Size of Government, *Journal of Political Economy,* 1981, **89,** 914-927 .

եկամուտ ունեցողների եկամուտները մեծացնող տրանսֆերտային սխեմաների շահառու:

Հենվելով այս թեորեմի վրա՝ տրամաբանական է ենթադրել, որ անհավասարության ընկալումը և եկամուտների վերաբաշխմանն աջակցությունը, առաջին հերթին, պայմանավորված են սոցիալ-տնտեսական անհավասարության փաստացի ցուցանիշներով: Կարելի է զալ նաև այն մտահանգման, որ այն երկրներում, որտեղ անհավասարության մակարդակը բարձր է, ընտրողները կառավարությունից կպահանջեն վերաբաշխիչ միջոցառումների ձեռնարկում՝ բարձր եկամտաբերությամբ խմբերին պրոգրեսիվ հարկման ենթարկելու միջոցով: Այսինքն, անհավասարության բացասական էֆեկտները դրսևորվում են այն ժամանակ, երբ մարդիկ այն համարում են չափազանց, ոչ արդարացի և անհանդուրժելի, այսինքն, դրանք միջնորդավորվում են սուբյեկտիվ ընկալմամբ: Սակայն խնդիրն այն է, որ «անհրաժեշտ» և «ավելցուկային» անհավասարության միջև ջրբաժանն աղոտ է և առկա է միայն մարդկանց սուբյեկտիվ պատկերացումներում:

Սոցիալական մոբիլություն. Վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունքը պայմանավորված է նաև այնպիսի երևույթով, ինչպիսին է սոցիալական մոբիլությունը: Ըստ Պ. Սորոկինի, «սոցիալական մոբիլության ներքո հասկանում ենք անհատի անցումը մեկ սոցիալական դիրքից մյուսը, ընդ որում, «շարժումը դեպի վերև» նշանակում է սոցիալական վերելք, իսկ դեպի ներքև՝ սոցիալական անկում»:[8]

Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչպես են մարդիկ տեսնում իրենց սոցիալական մոբիլությունը, և ինչպես են այն չափում հետազոտողները: Այսպես, օրինակ, մարդիկ կարող են ակնկալել սեփական սոցիալ-տնտեսական կացության բարելավում կրթության ստացման, եկամուտների ավելացման և սոցիալական նոր կարգավիճակի ձեռքբերման միջոցով: Այստեղ առանցքայինն այն է, որ եթե մարդիկ «իրենց վրա զգում են» սոցիալական

[8] **Сорокин П.,** Человек, цивилизация, общество. М., 1992, сс. 373-374.

մոբիլության արտահայտումը՝ սոցիալական վերելքի դրսևորմամբ, ապա նրանք առավել հանդուրժող կլինեն անհավասարության և ավելի քիչ պահանջկոտ՝ եկամուտների վերաբաշխման նկատմամբ: Իսկ եթե սոցիալական մոբիլությունն ուղեկցվում է սոցիալական անկմամբ, ապա նվազում է անհավասարության նկատմամբ հանդուրժողականությունը՝ սրելով վերաբաշխմանը դեմ ուղղված տրամադրությունները: Այս առիթով Դ.Կանեմանը նշում էր, որ «կորուստների նկատմամբ ռեակցիան ավելի ուժեղ է, քան ձեռքբերումների»:[9]

Ա. Ալեսինան և Լ. Ֆեռարան, հետազոտելով սոցիալական մոբիլության ազդեցությունը եկամուտների վերաբաշխման նկատմամբ վերաբերմունքի ձևավորման վրա, պնդում են, որ «նրանք, ովքեր հավատում են հնարավորությունների հավասարությանը, աջակցություն չեն ցուցաբերում հարուստներից դեպի աղքատներն իրականացվող վերաբաշխմանը»: Այդ վարքագիծն ունի իր ռացիոնալ բացատրությունը. Այդ գաղափարին հավատացողները կարող են ակնկալել ապագայում իրենց եկամուտների աճ և սոցիալ-տնտեսական կացության բարելավում, այդ իսկ պատճառով դեմ են այսպիսի «համահարթեցմանը»:[10] Ավելին, սոցիալական վերելքի տեսքով արտահայտվող սոցիալական մոբիլությունը նպաստում է անհավասարության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը.մասնավորապես, բոլոր նրանք, ովքեր կարողանում են բարելավել իրենց սոցիալ-տնտեսական դիրքերը, ավելի քիչ են հակված եկամուտների վերաբաշխման, ի տարբերություն նրանց, ում սոցիալական կացությունը վատթարանում է: Եթե անհատը հավատում է, որ ակնկալվող սոցիալական վերելքը համապատասխանում է արդարության մասին իր պատկերացումներին և հնարավոր է առաջխաղացում սեփական ջանքերի օգնությամբ՝ նա զգում է հնարավորությունների հավասարության առկայություն, ապա վերաբաշխման նկատմամբ պահանջարկն էականորեն նվազում է: Ընդհակառակը, կաշառա-

[9] **Канеман Д.,** Думай медленно, решай быстро. М., 2014, с. 370.
[10] **Alesina A., La Ferrara E.,** նշվ. Աշխ.

կերության և «օգտակար կապերի» միջոցով սոցիալական վերելքի պայմաններում ավելի ցածր եկամուտ ստացողները կպահանջեն եկամուտների վերաբաշխում՝ ընթացիկ «խաղի կանոնները» համարելով ոչ արդարացի։

Արդարության ընկալում. Վերաբաշխիչ քաղաքականության նկատմամբ ձևավորող վերաբերմունքը պայմանավորվում է նաև այնպիսի կարևորագույն գործոնով, ինչպիսին է հասարակության շրջանում արդարության մասին ձևավորված պատկերացումը։ Առաջին, միշտ չէ, որ անհատի սոցիալական մոբիլությունը, իսկ ավելի կոնկրետ, սոցիալական վերելքը, դրական զգացողություններ է առաջացնում իր մոտ՝ այն պարզ պատճառով, որ վերջինս կարող է այն գնահատել ոչ բավարար՝ համարելով, որ արժանի է ավելիին։ Եվ երկրորդ, մարդիկ հակված են սեփական ձեռքբերումները գնահատելու այլոց հետ համեմատության մեջ, ուստիև նման դեպքերում կարող են առաջ գալ այնպիսի զգացողություններ, ինչպիսիք են բացասական հույզերը, անարդարության զգացումը և այլն։ Այս դեպքում հարց է առաջանում՝ արդյո՞ք ցանկացած հաջողություն ընդունելի է այլոց համար և արդյո՞ք նպատակին հասնելու համար բոլոր միջոցներն արդարացված են. թերևս ոչ. հետազոտությունները ցույց են տալիս, որ այն դեպքում, երբ մարդիկ տքնաջան աշխատանքը գնահատում են որպես հաջողության հասնելու հիմնական գործիք, այս եղանակով հիմնավորում են անհավասարության բարձր մակարդակի գոյությունը՝ արդյունքում մեծացնելով վերջինիս նկատմամբ հասարակական հանդուրժողականության մակարդակը, ինչն էլ, իր հերթին, թուլացնում է պետության՝ վերաբաշխիչ քաղաքա-կանության իրականացման հակումը։[11] Նման հասարակական ընկալումների համաձայն, հարուստների հաջողությունն արդարացված չէ, ուստի և այդ հաջողության «պտուղները» ենթակա են վերաբաշխման՝ աղքատների օգտին. այս տրամա-դրությունները

[11] **Alesina A., Angeletos G.M.,** նշվ. աշխ.

մոտիվացնում են պետության կողմից վերաբաշխիչ մեխանիզմների գործարկումը:

Սոցիալ-մշակութային պատկերացումներ. Անհավասարությանը տրվող գնահատականը կարող է պայմանավորված լինել արդարության մասին գերակա հասարակական պատկերացումներով: Այսպես, օրինակ, պատմականորեն պահպանողականները կողմ էին ազատ շուկայի գոյությանը և պաշտպանում էին կապիտալիզմից բխող հարստության անհավասարաչափ բաշխումը՝ պնդելով, որ եկամուտների անհավասարություն առաջանում է նաև ազատ փոխանակման դեպքում: Անշուշտ, պահպանողականները չհրաժարվեցին իրենց մոտեցումներից, սակայն այսօր նրանք շատ ավելի շատ են ցանկանում քննարկել անհավասարության խնդիրը, երբ խոսքը վերաբերում է եկամուտների վերաբաշխմանը: Ավելի ուշ նրանք իրենց ուշադրությունը սևեռեցին այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են աղքատների տեսակարար կշռի ավելացումը և ավելի «փխրուն» աշխատավոր դասի ձևավորումը:

Անհավասարության և արդարության վերաբերյալ սոցիոմշակութային պատկերացումների մասին խոսելիս հարկ ենք համարում առանձնացնել նաև ամերիկյան և եվրոպական մոտեցումների տարբերությունները: Օրինակ, ամերիկացիները կարծում են, որ աղքատությունը անհատի ոչ բավարար ջանքերի հետևանք է, մինչդեռ եվրոպացիների համար աղքատությունը մեծապես ասոցացվում է անհաջողությունների և սոցիալական անարդարության հետ: Ռ. Բենաբոուն և Ջ. Տիրոլը ընկալման այդ տարբերությունները բացատրում են՝ ելնելով Մ. Լերների «արդար աշխարհի նկատմամբ հավատի» գաղափարից,[12] և պայմանականորեն ներկայացնում են երկու հավասարակշռություն՝ ամերիկյան և եվրոպական: Առաջին հավասարակշռությունը բնութագրվում է արդար աշխարհի նկատմամբ հավատով, որտեղ գնահատվում և

[12] «Մարդիկ պահանջմունք ունեն հավատալու, որ ապրում են այնպիսի աշխարհում, որտեղ ստանում են այն, ինչին արժանի են»: Ավելի մանրամասն՝ **Lerner M.,** The Belief in a Just World: A Fundamental Delusion. New York, 1980.

պարգևատրվում են անհատի ջանքերը, այսինքն, այս դեպքում ռեսուրսների վերաբաշխման կարիք չկա: Այսպիսի համակարգում մարդիկ շահագրգռված չեն վճարելու բարձր հարկեր, այդ թվում նաև՝ արդարացնելու այլոց «անգործությունը»: Երկրորդ՝ եվրոպական համակարգը, բնութագրվում է տնտեսական բարեկեցության վերաբերյալ նրանում ներգրավված դերակատարների հոռետեսությամբ, և, համապատասխանաբար, վերաբաշխիչ քաղաքականություն իրականացնելու մեծ պահանջով:[13]

Ա. Ալեսինան և Գ. Անգելետոսը, անդրադառնալով վերոնշյալ երկու համակարգերին՝ դրանց առկայությունը պայմանավորում են պատմական անցյալով: Մասնավորապես, Եվրոպայում երկարաժամկետ հեռանկարում հաջողության և սոցիալական առաջընթացի հնարավորությունները պայմանավորված էին այս կամ այն սոցիալական դասին պատկանելիությամբ, ոչ թե այնպիսի գործոններով, ինչպիսիք են մտավոր ունակությունները, ջանքերը, կամքը և այլն: Մինչդեռ ԱՄՆ-ում հասարակությունը զերծ էր դասակարգային կոշտ տարբերությունների առկայությունից. այստեղ գերակա է այն պատկերացումը, որ յուրաքանչյուր անհատի տնտեսական հաջողություն, առաջին հերթին, պայմանավորված է վերջինիս ներդրած ջանքերով և կատարած աշխատանքով, այսպես կոչված, «ամերիկյան երազանքով» (American Dream):[14]

ԱՄՆ-ի տվյալների հիման վրա տեսաբաններ Պ.Ջուլիանոյի և Ա.Սպիլիմբերգոյի արված վերլուծությունը ցույց է տալիս, որ երիտասարդ տարիներին վերապրած սոցիալ-տնտեսական ցնցումները արդյունքում հանգեցնում են «գաղափարական ձախ»-ի ձևավորմանը, ներառյալ անհավասարությանը տրվող գնահատականը և հասարակության եկամուտների վերաբաշխման հարցում

[13] **Benabou R., Tirole J.,** Belief in a Just World and Redistributive Politics // NBER Working Paper, 2005, no. 11208, pp. 7-10, http://documents1.worldbank.org/curated/en/218181468181781347/pdf/WPS6803.pdf

[14] An Hereditary Meritocracy. *The Economist*, http://www.economist.com/news/briefing/21640316-children-rich-and-powerful-are-increasinglywell-suited-earning-wealth-and-power, 10.08.2020.

պետության ակտիվ մասնակցության նկատմամբ դրական վերաբերմունքը:[15]

Մեկ այլ մեխանիզմ կարող է պայմանավորված լինել գաղափարախոսական դաստիարակությամբ, որը առավել վառ կերպով արտացոլվում է հետսոցիալիստական տարածության մեջ: Այստեղ առաջանում են մի շարք հարցեր, մասնավորապես, արդյո՞ք նախնական գաղափարախոսական նախընտրություններն ազդում են քաղաքական ռեժիմի ընտրության վրա, թե՞ այդ նախընտրությունները ձևավորվում են աստիճանաբար՝ կենսափորձի ազդեցությամբ:[16]

Այսպես, Ա. Ալեսինան և Ն. Ֆուկս-Շյունդելնը ուսումնասիրում են, թե արդյոք անհավասարության և դրա հետ կապված սոցիալական քաղաքականության նկատմամբ անձնական նախընտրությունը էնդոգեն կամ էկզոգեն է քաղաքական ռեժիմի նկատմամբ: Նրանք հարցադրումը ձևակերպում են այսպես՝ արդյո՞ք հնարավոր է սոցիալիզմի և վերջինիս ներքո ընկալվող խորը գաղափարախոսական դաստիարակության (որն, առաջին հերթին, ենթադրում է ուժեղ կախվածություն պետությունից) պայմաններում համապատասխան հայացքներ և վերաբերմունք ձևավորել անհավասարության և վերաբաշխման նկատմամբ:

Վերոնշյալ հեղինակները այս հարցին պատասխանում են՝ բերելով Արևմտյան և Արևելյան Գերմանիաների տարանջատման, այնուհետև՝ միավորման օրինակը: Հետազոտությունը ցույց տվեց, որ արևելյան գերմանացիներն ավելի շատ, քան իրենց արևմտյան հայրենակիցները, հավատում են, որ ոչ թե անձնական ջանքերը, այլ սոցիալական պայմանները՝ ի դեմս սոցիալ-տնտեսական համակարգի, որոշում են մարդու հաջողությունները և հասարակության

[15] **Piketty Th.,** Social Mobility and Redistributive Politics; Guliano P., Spilimbergo A. Growing Up in Recession: Beliefs and the Macroeconomy // NBER Working Paper, 2009, no. 15321, pp. 5-7, https://conference.nber.org/conferences/2010/CS10/Giuliano_Spilimbergo.pdf

[16] **Iverson T., Soskice D.,** Information, Inequality, and Mass Polarization: Ideology in Advanced Democracies. *Comparative Political Studies,* 2015, DOI: 10.1177/0010414015592643

մեջ սոցիալական դիրքը։ Հիմնական եզրահանգումն այն է, որ արևելագերմանական սոցիալիզմը ձևավորեց գաղափարական կախվածություն պետությունից, և այն հաղթահարելու համար կարող է պահանջվել միջին հաշվով երկու սերունդ։[17] Այսպիսի հակադրությունները ցույց են տալիս, որ հետսոցիալիստական բոլոր երկրներում ռեսուրսների վերաբաշխման նկատմամբ պահանջարկն ավելի մեծ է, քան «հին կապիտալիստական տարածության» երկրներում։[18]

Քաղաքական-ինստիտուցիոնալ միջավայր. Առհասարակ, վերաբաշխման նկատմամբ վերաբերմունքի ձևավորման ինստիտուցիոնալ դետերմինանտները լայնորեն քննարկվում են գիտական գրականության մեջ։ [19] Հետազոտությունները ցույց են տալիս, որ հասարակության կողմից համընդհանուր բարեկեցության պետության մոդելին աջակցության ցուցաբերումը, որն, առաջին հերթին, արտահայտվում է հարկեր վճարելու պատրաստակամությամբ, մեծապես որոշվում է եկամուտների վերաբաշխման համակարգի թափանցիկությամբ և պետության և վերջինիս ինստիտուտների նկատմամբ հանրային վստահությամբ։ Միաժամանակ, հարկային և սոցիալական ապահովության համակարգերի ոչ թափանցիկությունը ձևավորում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ապատեղեկացվածությունը, հարկերից խուսափումը, կառավարության նկատմամբ անվստահությունը և այլն։[20] Մյուս

[17] **Alesina A., Fuchs-Schundeln N.,** Good-Bye, Lenin, or Not? *American Economic Review*, 2007, 4, 1507-1528

[18] **Corneo G., Gruner H.,** Individual Preferences for Political Redistribution. *Journal of Public Economics,* 2002, 1, 83-107

[19] **Algan Y., Cahuc P., Sangnier M.** Op. cit.; **Денисова И.** Неравенство, качество институтов и спрос на перераспределение доходов: о чем говорят данные опросов населения в посткоммунистических странах. *Журнал НЭА*, 2013, 2; Contested Welfare States. Welfare Attitudes in Europe and Beyond. Svallfors S., ed. Stanford (California), 2012; **Монусова Г.** Социальная политика в европейском обществе: субъективный контракт между обществом и государством. *Вопросы экономики*, 2012, 6; **Rothstein B., Uslaner E.** All for One: Equality, Corruption and Social Trust. *World Politics*, 2005, 1.

[20] **Algan Y., Cahuc P., Sangnier M.,** Op. cit.; Aghion Ph., Algan Y., Cahuc P., Shleifer A. Op. cit.; **Csontos L., Kornai J., Toth I.** Tax Awareness and Reform of the Welfare State. *Economics of Transition*, 1998, 2, 77-99

կողմից, անհավասարության և վերաբաշխման նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, ինչպես նաև սոցիալական մոբիլության հեռանկարները ուղղակիորեն կապված են այն հանգամանքի հետ, թե որքանով են հասարակությանը հասկանալի եկամուտների անհավասարության աղբյուրներն ու պատճառները, ավելի կոնկրետ՝ հասարակական ընկալումներում որքանով է այն արդարացված։

Վստահություն պետության և պետական ինստիտուտների նկատմամբ. Սոցիալական վերելքի պայմաններում անհատի գիտակցության մեջ արդարության և անհավասարության ընկալումը կապված է այն հանգամանքի հետ, թե ինչպես է ձևավորված և գործառնում պետական կառավարման համակարգը, մասնավորապես, որքանով է այն թափանցիկ և հաշվետվողական.ակնհայտ է սերտ վիճակագրական կապը վերաբաշխման նկատմամբ պահանջարկի և պետական կառավարման որակի միջև. վերջինս տվյալ դեպքում ներառում է պետության կողմից հասարակության համար իրականացվող սոցիալական և ֆինանսական քաղաքականության պարզությունը և ընկալելի լինելը։ Մյուս կողմից, պետական կառավարման որակը չափվում է նաև նրանով, թե որքանով է պետությունը նպաստավոր պայմաններ ստեղծում իր քաղաքացիների ինքնաիրացման համար և օգնում բարելավելու նրանց սոցիալ-տնտեսական կացությունը. տվյալ դեպքում անհատները հավատում են արդարությանը և ավելի հանդուրժող են եկամուտների անհավասարության նկատմամբ, այսինքն, չեն պահանջում եկամուտների լրացուցիչ վերաբաշխում։

Ըստ Ու. Իստերլիի, անհավասարությունն ունի երկու աղբյուր՝ շուկայական հարաբերություններով պայմանավորված և կառուցվածքային, որոնցից յուրաքանչյուրը հասարակության կողմից յուրովի է ընկալվում։ Այսպես, օրինակ, կառուցվածքային անհավասարությունը հետևանք է ինստիտուտների գործունեության, որոնք ստեղծում են էլիտա և ապահովում վերջինիս գոյությունը ոչ շուկայական մեխանիզմների օգնությամբ։ Հարկ է նշել, որ դրանք առաջ են բերում պետության նկատմամբ հասարակական

անվստահություն, որը, մի կողմից, կարող է արտահայտվել եկամուտների վերաբաշխման նկատմամբ բարձր պահանջների, իսկ մյուս կողմից, ոչ քաղաքացիական վարքագծի դրսևորումները (հարկերի վճարումից խուսափում, անօրինական նպաստների ստացում, օգտագործելու ցանկացած հնարավորություն՝ չվճարելու հանրային ծառայություններից օգտվելու համար և այլն) արդարացնելու պատրաստակամությամբ:[21]

Կարելի է ենթադրել, որ պետական ինստիտուտների նկատմամբ հասարակական վստահության առկայության դեպքում ձևավորվում են առաջխաղացման թափանցիկ մեխանիզմներ, քաղաքացիական վարքագիծ, ինքնուրույն հաջողության հասնելու հնարավորություն, ինչը թույլ է տալիս նաև ենթադրելու, որ այս դեպքում մարդիկ մեծապես կողմնորոշվում են դեպի անհատական ջանքերը: Հակառակ դեպքում, երբ իշխում է համատարած անվստահություն, առաջխաղացման մեխանիզմները կոռումպացված են, իսկ հասարակության զգալի մասը արդարացնում է «ազատ հեծյալի»[22] վարքագիծը, աճում է պետական կարգավորման և վերաբաշխիչ պրակտիկաների ընդլայնման անհրաժեշտությունը:[23]

Միջանձնային, ինչպես նաև պետության նկատմամբ հասարակական վստահությունը, պետություն-հասարակություն փոխհարաբերությունների բաց և թափանցիկ լինելը, օրենքի գերակայությունը, կոռուպցիայի բացակայությունը ինստիտուցիոնալ միջա-

[21] **Easterly W.,** Inequality does Cause Underdevelopment: Insights from a New Instrument. *Journal of Development Economics,* 2007, 2, 755-776

[22] Հասարակական գիտություններում «ազատ հեծյալի» խնդիրը շուկայի ձախողման ձև է, որի դեպքում բոլոր նրանք, ովքեր օգտվում են հանրային բարիքներից կամ ծառայություններից (առողջապահական, կոմունալ ծառայություններ և այլն), չեն վճարում դրանց համար կամ վճարում են պակաս չափով: «Ազատ հեծյալների» գոյությունը խնդրահարույց է այնքանով, որ չվճարելով բարիքների համար (նաև ուղղակիորեն՝ տուրքերի կամ անուղղակիորեն՝ հարկերի միջոցով), շարունակում են հասանելիություն ունենալ և օգտվել դրանցից, ինչի պատճառով հանրային բարիքը կարող է թերարտադրվել, գերօգտագործվել կամ քայքայվել:

[23] **Aghion Ph., Algan Y., Cahuc P., Shleifer A.,** Regulation and Distrust // NBER Working Paper, 2009, no. 14648 (http://www.nber.org/papers/w14648).

վայրի այն պարամետրերն են, որոնք ազդում են պետությունից ձևավորվող հասարակության ակնկալիքների, ինչպես նաև պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության հասարակական ընկալման վրա: Այսպիսի ինստիտուցիոնալ-մշակութային բնութագրերը կարող են ձևավորել անհավասարության նկատմամբ որոշակի վերաբերմունք: Մասնավորապես, եթե ելնենք նրանից, որ վերաբաշխման նկատմամբ վերաբերմունքը կապված է անհավասարության ծագման աղբյուրների թափանցիկության, ինչպես նաև արդարության մասին պատկերացումների հետ, ապա կարելի է ենթադրել, որ զարգացած ժողովրդավարական ինստիտուտները կնվազեցնեն եկամուտների վերաբաշխման ցանկությունը, իսկ իշխանության ոչ թափանցիկությունը և անկանխատեսելիությունը՝ ընդհակառակը, առաջ բերեն հասարակության կողմից նման ցանկության արտահայտում:

Այսպիսով, կարելի է պնդել, որ քաղաքական-ինստիտուցիոնալ միջավայրը եկամուտների վերաբաշխման նկատմամբ որոշակի հասարակական վերաբերմունք է ձևավորում տարբեր ուղիներով. և՛ սոցիալական մոբիլությունը, և արդարության մասին պատկերացումներն ուղղակիորեն ազդում են անհավասարության երևույթի ընկալման և վերաբաշխման պահանջարկի ձևավորման վրա, իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, մատնանշում են պետության գործառնման առանձնահատկությունները, մասնավորապես, որակը և արդյունավետությունը: Այնտեղ, որտեղ ծաղկում է ապրում կոռուպցիան, չկան օրենքի իշխանություն, սովորաբար, արգելակված է «սոցիալական սանդուղքը», և, համապատասխանաբար, հասարակությունն առավել ագրեսիվ կերպով կարձագանքի այլոց ոչ արդարացված բարեկեցությանը և կպահանջի եկամուտների վերաբաշխում:

Վերջին շրջանում հրապարակված մի շարք աշխատություններում ապացուցվում է, որ եկամուտների վերաբաշխման մասին մարդկանց ճնշող մեծամասնության պատկերացումները չեն համընկնում փաստացի անհավասարության հետ, այսինքն, փաստացի անհավասարության մասին մարդկանց դատողություն-

ներն ու գնահատականները համատեղելի չեն դրա իրական մեծության հետ: Այսպես, Ի. Լյուբիմովը գտնում է, որ անհավասարության և տնտեսական աճի փոխադարձ կապի վերաբերյալ առաջարկվող բացատրությունները ելնում են փաստացի անհավասարությանն արձագանքող անհատի վարքագծից: [24]

Իսկ, օրինակ, Վ. Գիմպելսոնը և Դ. Թրեյսմանը, ուսումնասիրելով միջազգային մեծածավալ տվյալների բազաներ՝ 110 երկրի ընդգրկվածությամբ (այդ թվում՝ նաև ՏՀԶԿ երկրների), եզրակացնում են, որ փաստացի անհավասարության վիճակագրական գնահատականն արմատապես տարբերվում է վերջինիս սուբյեկտիվ գնահատականից:[25] Նրանց պնդմամբ, տարատեսակ սոցիալ-քաղաքական գործոններ՝ սոցիալական կոնֆլիկտների հավանականությունը, եկամուտների վերաբաշխման հակումը, կախված են ոչ թե փաստացի, այլ ընկալվող անհավասարությունից: Այստեղից կարելի է ենթադրել, որ անհատների տնտեսական և էլեկտորալ վարքագիծը մեծապես պայմանավորված է ոչ թե փաստացի անհավասարության ցուցանիշներով, այլ այդ անհավասարության հասարակական ընկալմամբ, ուստիև անհրաժեշտ է վերջինս առավել մանրամասն ուսումնասիրել:[26]

Փաստացի անհավասարության և վերջինիս ընկալվող, սուբյեկտիվ գնահատման միջև եղած տարբերությունները վառ կերպով արտահայտում են ԱՄՆ-ում 2007-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամի, ինչպես նաև 2011թ. Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունները: Երկու երկրներում էլ Ջինիի գործակիցը

[24] **Любимов И.,** Неравенство и экономический рост: теоретические аспекты зависимости. Федеральное государственное бюджетное образовательное учреждение высшего профессионального образования “Российская академия народного хозяйства и государственной службы при президенте Российской федерации” 2016 (http://ssrn.com/abstract=2768662).

[25] **Gimpelson V., Triesman D.,** Misperceiving inequality, Economics & Politics, Vol.30 (1), 2018, pp. 27-54

[26] **Niehues J.,** Subjective Perceptions of Inequality and Redistributive Preferences: An International Comparison // Cologne Institute for Economic Research. IW-TRENDS Discussion Paper, 2014, no. 2; Gimpelson V., Triesman D. Misperceiving Inequality // NBER Working Paper, 2015, no. 21174, pp.101-111

սկսած 2000թ.՝ փոփոխության է ենթարկվել աննշան չափով (Եգիպտոսի դեպքում՝ նույնիսկ նվազել է), սակայն ճգնաժամային իրավիճակում անհավասարության հասարակական ընկալման փոփոխությունները ստիպեցին մարդկանց գործել՝ դուրս գալու փողոց, բողոքելու և ընդվզելու։[27] Մասնավորապես, այդպիսին էին «Occupy Wall Street» և «We are the 99 percent» սոցիալական շարժումները, ինչպես նաև Եգիպտոսի «արաբական գարունը». ուշագրավ է, որ այս բոլոր իրադարձությունները տեղի են ունեցել փաստացի կայուն անհավասարության պայմաններում։

Եզրակացություն

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ արդարության և սոցիալ-տնտեսական անհավասարության հասարակական ընկալումը կրում են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը, ինչի հետևանքով ընկալվող և փաստացի արդարության և սոցիալական անհավասարության ցուցանիշներն արմատապես տարբերվում են միմյանցից։ Իր հերթին, վերաբաշխման նկատմամբ հասարակական պահանջը ձևավորվում է՝ ելնելով արդարության և անհավասարության ոչ թե փաստացի, այլ ընկալվող, սուբյեկտիվ գնատականներից։ Սոցիալ-տնտեսական անհավասարության հասարակական ընկալումը, և, համապատասխանաբար, եկամուտների վերաբաշխման պահանջը թույլ են կապակցված այս կամ այն երկրում ռեսուրսների փաստացի բաշխման, այն է՝ փաստացի անհավասարության հետ, այդ իսկ պատճառով հետազոտողները դեռևս փնտրում են այլ ուղիներ և միջոցներ՝ բացատրելու եկամուտների

[27] **Ջինիի գործակիցը (Gini Index)** վիճակագրական ցուցանիշ է, որը կիրառում են տվյալ պետության կամ երկրամասի հասարակության շերտավորման աստիճանի վերաբերյալ այլ ուսումնասիրվող հատկանիշի, օրինակ՝ ամենահաճախը տարեկան եկամտի աստիճանը որոշելու համար, որը հիմնականում օգտագործում են ժամանակակից տնտեսական հաշվարկների համար։

վերաբաշխման գնահատման հարցում երկրների իրականացրած քաղաքականությունների միջև եղած տարբերությունները և դրանց հետևանքները:

Perceptions of Justice and Social Inequality in the Context of Redistributive Policy Implementation

NARINE ASRYAN
Yerevan State University

In modern socio-political and socio-economic conditions, various public perceptions and ideas about justice and socio-economic inequality are formed. It should be noted that these phenomena play a key role in the implementation of state redistributive policy, public support provided to him or, conversely, the formation of opposition sentiments. On the other hand, existing social ideas about the redistribution of income are conditioned by a number of objective-subjective factors: social need for equality, actual and perceived social (in) equality, prospects for social mobility, traditional ideas about justice, socio-cultural characteristics of society, political-institutional environment and etc. The article examines these factors in detail, discusses the impact of each of them on the attitude of society to the policy of redistribution.